

«Զ Ա Ն Գ Վ Ա Ծ»

Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի ակադեմիկոս
Ա.Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական
քոլեջի շենքային պայմանների բարելավման

Շրջակա միջավայրի վրա ազդեցության
նախնական գնահատման հայտ

Կատարող՝

Տնօրեն՝

«Քոնսեկորդ» ՍՊԸ

Վ.Թևոսյան



Երևան- 2020

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ _____	4
<i>Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը _____</i>	5
2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐ և ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ) _____	8
<i>ա. Գոյություն ունեցող իրավիճակը _____</i>	9
<i>բ. Նախատեսվում է կառուցել՝ _____</i>	9
<i>գ. Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ _____</i>	10
<i>դ. Նախապատրաստական աշխատանքներ _____</i>	11
<i>ե. Քանդման և հողային աշխատանքներ _____</i>	11
<i>զ. Շինարարության կազմակերպում _____</i>	12
<i>է. Ջրամատակարարում և ջրահեռացում _____</i>	12
<i>ը. Նյութերի և բնառեսուրսների օգտագործում _____</i>	13
3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅՌ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ _____	14
3.1. Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները _____	14
3.2. Մակերևութային և ստորգետնյա ջրային ռեսուրսներ _____	14
3.3. Հողեր _____	16
3.4. Բուսական աշխարհ _____	16
3.5. Կենդանական աշխարհ _____	18
3.6. Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ _____	18
3.7 Սոցիալ տնտեսական պայմանները _____	19
4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՅՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂԴՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ _____	20
4.1 Ռիսկերի գնահատում _____	20
4.2 Բնապահպանական միջոցառումներ _____	21
4.2.1. Մթնոլորտային օդ _____	21
4.2.2. Ջրային ռեսուրսներ _____	22
4.2.3. Հողային ռեսուրսներ _____	22
4.2.4. Աղմուկ _____	23

4.2.5. Կենսաբազմազանություն	23
4.2.6. Աշխատանքի անվտանգություն և առողջություն	24
4.3 Փոխհատուցում	24
5. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ և ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ	25
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ	27
ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	30

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Նախատեսվող գործունեություն	ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի ակադեմիկոս Ա.Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի շենքային պայմանների բարելավման շինարարական աշխատանքներ
Նպատակը	Քոլեջի մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացում
Նախագծի պատվիրատու	ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Ձեռնարկող	Զանգված ՍՊԸ
Ձեռնարկողի հասցե	Պ.Սևակի փողոց 8/2, 145 տարածք
Ձեռնարկողի կոնտակտային տվյալներ, էլ փոստ, հեռախոս	Հեռ.՝ 044 840070 zangvac-ltd@mail.ru Տնօրեն՝ Է.Մարտիրոսյան
Կառուցապատվող տարածքի գտնվելու վայրը	ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության փողոց 38
Կառուցապատվող հողամասի ընդհանուր մակերեսը	5.0 հա (50000 քմ)

Սույն նախնական գնահատման հայտում ներկայացված նախատեսվող գործունեության ձեռնարկող է հանդիսանում «Զանգված» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը:

Ընկերության իրավաբանական հասցե՝ ք. Պ.Սևակի փողոց 8/2, 145 տարածք: Գործունեության իրականացման վայրը՝ ՀՀ, Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ, Ազատության փողոց 38՝ Գավառի ակադեմիկոս Ա.Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի տարածք:

Նախատեսվող գործունեության նպատակն է՝ ապահովել գյուղատնտեսական քոլեջի ուսումնական ծրագրերի արդյունավետ իրականացումը, ինչպես նաև դասախոսական անձնակազմի և ուսանողության համար հարմարավետ պայմաններ:

Նախագծման և կառուցապատման համար հիմք է հանդիսացել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի առաջադրանքը, որը կազմվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության պատվերի հիման վրա:

Ա.Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության ենթակայության կազմակերպություն է, որը տվյալ դեպքում չունի որևէ գործառույթ, այլ միայն շահառու է: «Հանգված» ՍՊԸ նախագծային ընկերություն է, որը մրցույթով շահել է տվյալ ծրագրի իրականացման իրավունքը և քաղշին. կոմիտեի հետ պայմանագրային հիմունքներով իրականացնում է նշված նախագծումը:

Նախնական գնահատման հայտի մշակման համար օգտագործվել են հետևյալ տեղեկատվական աղբյուրները.

- Նախատեսվող գործունեության աշխատանքային նախագիծը,
- Նախատեսվող գործունեության ընթացքում հավաքագրված տվյալներն ու տեղեկատվությունը,
- Տարածքի վերաբերյալ վերլուծությունները, սխեմաները,
- Շահագրգիռ կողմերի հետ բանակցություններն ու քննարկումները:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման փուլում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

- Աշխատանքային նախագծի հիման վրա նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի մշակում,
- Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումների անցկացում,
- Բնապահպանական փորձաքննության նպատակով նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ հանրային քննարկումների արդյունքներ:

ՀՀ գործող օրենսդրությունը պահանջում է նախատեսվող գործունեության համար իրականացնել հանրության տեղեկացում և քննարկումներ նախագծման, շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման, փորձաքննության փուլերում: Նախատեսվող գործունեության նախնական գնահատման փուլում Երևան քաղաքում արդեն իսկ անցկացվել են հանրային քննարկումներ:

Օրենսդրական դաշտ, բնագավառի նորմատիվային ակտերը

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին օրենսդրությունը բաղկացած է ՀՀ սահմանադրությունից, Հայաստանի Հանրապետության

մասնակցությամբ միջազգային պայմանագրերից, «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքից և նրանից բխող ենթաօրենսդրական ակտերից, բնապահպանական ոլորտին առնչվող ավելի քան 30 ՀՀ օրենքներից, ինչպես նաև իրավական այլ ակտերից:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի ակադեմիկոս Ա.Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի շենքային պայմանների բարելավման շինարարական աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտը կազմելիս ընկերությունն առաջնորդվել է բնապահպանական օրենսդրության պահանջներով, որոնք ամրագրված են բնապահպանական ոլորտին առնչվող օրենսգրքերում և իրավական ակտերում: Քաղաքաշինության ոլորտի համար առավել կիրառելի ազգային բնապահպանական քաղաքականությունները և օրենսդրական կարգավորիչ հիմքերը ներկայացված են ստորև.

ՀՀ Սահմանադրություն (ընդունված 06.12.2015թ.) – 12-րդ հոդվածը <<**Շրջակա միջավայրի պահպանությունը և կայուն զարգացումը**>> սահմանում է պետության պատասխանատվությունը շրջակա միջավայրի պահպանության, բարելավման, վերականգնման, բնական պաշարների բնական օգտագործման վերաբերյալ՝ հաշվի առնելով պատասխանատվությունն ապագա սերունդների առջև: Յուրաքանչյուր ոք պարտավոր է հոգ տանել շրջակա միջավայրի պահպանության մասին:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենք (2014) - Օրենքով սահմանվում են ընդհանուր իրավական, տնտեսական և կազմակերպական սկզբունքներ, որոնք նախատեսված են տարբեր ծրագրերի և ճյուղային զարգացման “հայեցակարգերի” պարտադիր անցկացվող ՇՄԱԳ-ի իրականացման և փորձագիտական եզրակացության տրման համար: Համաձայն՝ “Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին” ՀՀ օրենքի, 14-րդ հոդվածով սահմանված են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության ենթակա հիմնադրությամբ փաստաթղթերը և նախատեսվող գործունեության տեսակները: Յուրաքանչյուր նախատեսվող գործունեություն՝ շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցություն ունեցող ուսումնասիրություն, արտադրություն, կառուցում, շահագործում, վերակառուցում, ընդլայնում, տեխնիկական և տեխնոլոգիական վերազինում, վերապրոֆիլավորում, կոնսերվացում, տեղափոխում, լուծարում, փակում, որը կարող է ազդեցություն ունենալ շրջակա միջավայրի վրա, ենթակա է բնապահպանական փորձաքննության: Շրջակա միջավայրի վրա ազդեցության ենթակա նախատեսվող գործունեության տեսակներն՝ ըստ բնագավառների դասակարգվում են երեք կատեգորիայի՝ «Ա», «Բ», «Գ», ըստ շրջակա միջավայրի վրա նվազող ազդեցության աստիճանի: Օրենքը

հստակեցնում է ծանուցման, փաստաթղթավորման, հանրային խորհրդատվությունների և բողոքարկման ընթացակարգերը:

«Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենք (ընդունված 1994թ. և լրամշակված՝ 2007թ.) - կարգավորում է արտանետման թույլտվությունները և սահմանում է մթնոլորտային օդի աղտոտման սահմանային թույլատրելի կոնցենտրացիաները: Աշխատավայրերում, բնակելի և հասարակական վայրերում, բնակարանային տնտեսության վայրերում, ինչպես նաև շինարարական հրապարակներում աղմուկի թույլատրելի սանիտարական նորմերը սահմանվում են ենթաօրենսդրական ակտով:

«ՀՀ հողային օրենսգիրք» (2001) - սահմանում է պետական, այդ թվում՝ տարբեր նպատակային նշանակության (գյուղատնտեսական, շինարարական, արդյունաբերական և այլ նպատակներով) հողերի օգտագործման դրույթները: Օրենսգիրքը սահմանում է նաև հողերի պահպանությանն ուղղված միջոցառումները, ինչպես նաև հողի նկատմամբ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների և քաղաքացիների ունեցած իրավունքները:

«Հողօգտագործման և պահպանման վերահսկողության մասին» ՀՀ օրենքը (2008թ) - նախատեսում է ՀՀ հողերի պահպանության և արդյունավետ օգտագործման խնդիրներն ու ձևերը, սահմանում է հողային օրենսդրության և կառույցների նկատմամբ վերահսկողություն, հողերի օգտագործումն ու պահպանությունը հսկող մարմինների իրավունքներն ու պարտականությունները: Օրենքի գործողությունը տարածվում է ՀՀ Հողային Ֆոնդի բոլոր հողերի վրա՝ անկախ նպատակից, սեփականության ձևից և/կամ օգտագործման իրավունքից:

«Թափոնների մասին» ՀՀ օրենք (2004) - սահմանում է թափոնների, այդ թվում շինարարական աղբի, հավաքման, փոխադրման, պահման, մշակման, օգտահանման, ինչպես նաև շրջակա միջավայրի և մարդու առողջության վրա թափոններից առաջացող բացասական ազդեցությունների կանխարգելման հետ կապված իրավական և տնտեսական հիմքերը: Օրենքով սահմանում են նաև ոլորտի պետական լիազորված մարմինների իրավասությունները: ՀՀ Կառավարության 121-Ն որոշումը, որը վերաբերում է ՀՀ-ում վտանգավոր թափոնների վերամշակման, վնասազերծման, պահպանման, փոխադրման և տեղադրման գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին (2003), պարունակում է դրույթներ ՀՀ-ում, այդ թվում քաղաքաշինության բնագավառում առաջացող բոլոր վտանգավոր թափոնների մասին:

«Բնապահպանական վերահսկողության մասին» ՀՀ օրենք (2005) - կարգավորում է ՀՀ-ում բնապահպանական օրենսդրության իրականացման նկատմամբ վերահսկողության կազմակերպման ու իրականացման հետ կապված հարցերը և պետական վերահսկողության կազմակերպումը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնապահպանական օրենսդրության և ՇՄԱԳ փորձագիտական եզրակացության պահանջների կատարման վերաբերյալ,

սահմանում ՀՀ բնապահպանական օրենսդրության նորմերի իրականացման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունների, համապատասխան ընթացակարգերի, պայմանների, դրանց հետ կապված հարաբերությունների, ինչպես նաև բնապահպանական վերահսկողության իրավական և տնտեսական հիմքերը:

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենք (1998) - կարգավորում է շինարարական գործընթացի կազմակերպումը, պահանջում է նախատեսվող գործունեության մասին տեղակատվության հրապարակումը և նախագծման փուլում հանրության մասնակցությունը (հոդվածներ 13, 14, 15, 16, Գլուխ 6):

Քաղաքաշինության ոլորտում բնապահպանական նորմերի և նորմատիվային փաստաթղթերի կիրառումն ապահովվում է Քաղաքաշինարարության նախարարի ՀՀ ՇՆ 10-01-2014 Շինարարությունում, նորմատիվ փաստաթղթերի համակարգ. Հիմնական դրույթներ Շինարարական նորմերը հաստատելու մասին N65-Ն հրամանով (8 ապրիլի 2014):

ՀՀ Քաղաքաշինության նախարարի «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգը» (հրաման N44, 28 ապրիլի, 1998) պահանջում է շինարարությանը վերաբերվող բոլոր նորմերի և ստանդարտների կիրառումը տնտեսվարող սուբյեկտի կողմից:

Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցուցակ (2013) պարունակում է ՀՀ-ում գործող շինարարական նորմերի համակարգը, այդ թվում՝ տարբեր տիպի աշխատանքների անվտանգության վերաբերյալ:

Բնապահպանական որակի ստանդարտները, որոնք կիրառվում են ջրային ռեսուրսների, օդի, ինչպես նաև աղմուկի և թրթռումների ազդեցությունը որոշելու համար, մշակված են և կիրառելի են նաև քաղաքաշինարարական ոլորտի համար:

2. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ (ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՀՁՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԲՆԱՌԵՍՈՒՐՄՆԵՐ և ՆՅՈՒԹԵՐ, ՏԵԽՆԻԿԱԿԱՆ և ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄՆԵՐ)

ա. Գոյություն ունեցող իրավիճակը

Ներկա դրությամբ քոլեջը բաղկացած է հիմնական ուսումնական մասնաշենքից, նորակառույց ակումբից, հին մարզադահլիճից, կաթսայատնից և ենթակայանից: Տարածքում առկա են ներքին ասֆալտապատ ճանապարհներ:

Գավառի պետական քոլեջը գտնվում է Գավառ քաղաքի հիմնական փողոցներից՝ Ազատության փողոց 38 հասցեում, անմիջապես փողոցի վրա, որով անցնում են բոլոր ենթակառուցվածքները: Շրջակայքում հիմնականում հանրային կազմակերպություններ են: Մոտակա բնակելի բազմաբնակարան շենքը գտնվում է 90 մ հեռավորության վրա:

Գավառի գյուղատնտեսական քոլեջը ներկայումս ապահովված է խմելու ջրի, կոյուղու, էլեկտրամատակարարման և գազամատակարարման համակարգերով, որոնք միացած են Գավառի քաղաքային ցանցերին:

Տարածքի մնացած մասը խոտածածկ է: Բերրի հողաշերտի հզորությունը կազմում է 40 – 60 սմ: Տարածքը գործնականում զուրկ է ծառերից, միայն մի քանի թուփ:

բ. Նախատեսվում է կառուցել՝

1. Նոր ուսումնական մասնաշենք նախատեսված 250 ուսանողի համար, որը իրենից ներկայացնում է եռահարկ ե/բետոնե շրջանակային համակարգով շինություն: Շենքը համալրված է մասնագիտական լսարաններով և լաբորատորիաներով: Նախատեսվել է վերելակ և թեքահարթակներ հաշմանդամություն ունեցող մարդկանց համար: Ներքին հարդարումը իրականավել է նորարարական և դժվարամաշ նյութերով: Արտաքին հարդարումը նախատեսվել է երեսապատում բնական քարերով:
2. Գոյություն ունեցող ուսումնական մասնաշենքի մի մասը նախատեսվում է դարձնել կաթի վերամշակաման արդի արտադրամաս:
3. Համալիրի սեյսմիկ ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ անհրաժեշտ է գոյություն ունեցող սպորտային մասնաշենքում կատարել ուժեղացման աշխատանքներ՝ տեղադրել ե/բ լայնական շրջանակ, ուժեղացնել հիմքերը, ե/բ կողավոր ծածկի սալերը, ե/բ կլոր անցքավոր ծածկի սալերը, աստիճանավանդակը, և արտաքին պատերը ներսի կողմից :
4. Նոր կաթսայատուն նոր կառուցվող ուսումնական մասնաշենքի համար:
5. Խելացի անասնագոմ նախատեսված 25 գլուխ կովի համար, ներառյալ մեքենայացված կաթի հրապարակով և անասունների զբոսանքի ցանկապատ տարածքով:
6. 100 տոննա խոտի կուտակման պահեստ ծածկված պրոֆիլավոր ցինկապատ թիթեղով:

7. Գյուղատնտեսական տեխնիկայի կայանման տարածք ծածկված 4 տրակտորի համար:
8. Ջրատաքացուցիչներով և ֆոտովոլտային պանելներով այլընտրանքային էներգիայի աղբյուրներ:
9. Տարածքում նախատեսվել է բարեկարգման և կանաչապատման աշխատանքներ, նոր մինի ֆուտբոլի դաշտ:
Ըստ առաջադրանքի քանդվող և նախատեսվող շինությունների մակերեսը կկազմի՝ Աղյուսակ 2.1.

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի ակադեմիկոս Ա.Թամամշևի անվան պետական գյուղատնտեսական քոլեջի նախագծային աշխատանքներ	Ք.մ.
Քանդվող մասնաշենք	926.5
Նոր կառուցվող ուս. մասնաշենք	1182
Վերակառուցվող և ուժեղացվող մարզադահլիճ	752.8
Անասնագոմ	367.4
Մարզահրապարակ	1026.9
Շվաքարան թիվ 1	162.4
Կաթսայատուն	39
Շվաքարան թիվ 2	320.8
Ընդհանուր կառուցապատման մակերես, ներառյալ քանդվող շինությունների մակերեսը	4777.8

գ. Ճարտարապետական և տեխնոլոգիական լուծումներ

Շենքերի սեյսմազինվածության մակարդակը նախատեսված սեյսմիկ - III գոտու համար (9 Բալ և ավելի)

Համաձայն ՀՀՇՆ IV-11.07.01-2006 շինարարական նորմերին հաշմանդամ և բնակչության սակավաշարժ խմբերի ազատ տեղաշարժման համար ձեռնարկվել են համապատասխան միջոցառումներ:

Բոլոր շինությունների շինարարական աշխատանքներն իրականացնվելու են միաժամանակ: Ըստ նշված բնութագրի ՍՆԻՊ 1.04.03-2008-ի նորմատիվներով նշված աշխատանքների իրականացումը հաշվարկված է 30 ամիս: Շին աշխատանքների իրականացման համար նախատեսում է 2 փուլ՝ նախապատրաստական և հիմնական:

ՀՀՇՆ 30-01-2014 քաղաքաշինություն. քաղաքային եվ գյուղական բնակավայրերի հատակագծում եվ կառուցապատում

ՀՀՇՆ 21-01-2014 Շենքերի եվ շինությունների Հրդեհային Անվտանգություն

Կառուցապատման վերաբերյալ ընդհանուր ցուցանիշները բերված են ստորև:

Նախագծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է բարեկարգել տարածքները: Տարածքների բարեկարգման համար կօգտագործվի նախօրոք հանված և պահեստավորված բերրի հողը:

Քոլեջի տարածքը բնորոշվում է բուսահողով հարուստ, ըստ տարածքում կատարված հորատումների արդյունքների ազատ մասերում բերրի հողի հզորությունը /շերտը/ կազմում է 40 - 60 սմ: Նշված բերրի շերտը հանվում և պահպանվում է համաձայն ՀՀ կառավարության ՀՀ ՀՈՂԻ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՀԱՆՄԱՆ ՆՈՐՄԵՐԻ ՈՐՈՇՄԱՆԸ ԵՎ ՀԱՆՎԱԾ ԲԵՐՐԻ ՇԵՐՏԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 20-Ի N 1026-Ն ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ 2 նոյեմբերի 2017 թվականի N 1404-Ն որոշման պահանջների:

դ. Նախապատրաստական աշխատանքներ

Շինարարական աշխատանքները սկսելու համար իրականացվել են հետևյալ նախապատրաստական աշխատանքները՝ կազմակերպվել է շինհրապարակ՝ ցանկապատով և այլ անհրաժեշտ ենթակառուցվածքներով:

Կազմակերպվել է անվտանգության տեխնիկայի կանոնների իրականացման համալիր մշակում՝ ղեկավարվելով ՀՀՇՆ III-IV.2008-ի դրույթներով:

ե. Քանդման և հողային աշխատանքներ

Հաշվի առնելով, որ տվյալ պահին աշխատանքնային նախագիծը դեռ պատրաստ չէ, ստորև բերված են քանդման արդյունքում առաջացող թափոնների և հողային զանգվածների ծավալները ըստ նախնական հաշվարկների:

- քանդման արդյունքում առաջացող շինարարական թափոններ՝ 278.0 մ³,
- հանվող հողային զանգված՝ 3820 մ³,
- այդ թվում բուսահող՝ 1540 մ³,
- ետլիցք՝ 1270 մ³:

Հողային զանգվածը կպահպանվի հանման վայրերում, իսկ բուսահողը կտեղափոխվի տարածքի հյուսիս-արևելյան մասում նախատեսվող տարածք, որի մակերեսը կկազմի՝ 770 մ³:

Աշխատանքների ավարտից հետո մնացորդային հողը՝ 1010 մ³ և բուսահողը՝ 1540 մ³, կօգտագործվեն տարածքի բարեկարգման համար, իսկ քանդման թափոնները՝ 278.0 մ³, կտեղափոխվեն Գավառի համայնքապետարանի կողմից հատկացված վայր:

գ. Շինարարության կազմակերպում

Շինարարության նորմատիվ տևողությունը որոշվել է հաշվի առնելով օբյեկտի նշանակությունը, կոնստրուկտիվ բնութագիրն ու շինարարության ընդհանուր ծավալը: Շինարարության տևողությունը կազմում է 30 ամիս՝ շինարարության թույլտվության տրամադրման օրվանից:

Շինմոնտաժային աշխատանքների իրականացման տեխնոլոգիայի տեսանկյունից շինարարությունն իրականացվելու է ավանդական եղանակներով՝ կիրառելով շինարարական կազմակերպության սեփական շինարարական մեքենաները և մեխանիզմները, իսկ բացակայության դեպքում, վաճակալել դրանք այլ կազմակերպություններից:

Շինարարության ընթացքում բանվորները կսնվեն քոլեջի ճաշարանում: Կենցաղային կարիքների համար նույնպես կօգտագործվեն քոլեջի սանհանգույցները, հանգստի սենյակները և այլն: Շինարարությունը իրականացնող աշխատողների ընդհանուր թիվը նախապատրաստական աշխատանքների փուլում կազմելու է՝ 5 մարդ, շինարարական աշխատանքների ժամանակ այն առավելագույնը կհասնի մինչև 55 մարդ:

է. Օգտագործվող տեխնիկական և տրանսպորտային միջոցներ

Շինարարական աշխատանքները իրականացնելու համար նախատեսվում է օգտագործել հետևյալ տեխնիկական և տրանսպորտային միջոցները.

- Ավտոկռունկ՝ 2 հատ,
- Բետոնատար մեքենա՝ 1 հատ
- Բեռնատար մեքենա՝ 3 հատ:

ը. Ջրամատակարարում և ջրահեռացում

Ջրամատակարարման և ջրահեռացման գործընթացներն իրականացվում են գործող շինարարական նորմերի ու կանոնների և տեխնիկական պայմանների համաձայն:

Գավառի գյուղատնտեսական քոլեջը ներկայում ապահովված է ջրամատակարարման և կոյուղու համակարգերով:

Ջրատարում վթարների և վերանորոգումների ժամանակ ջրամատակարարման անընդհատությունը ապահովելու, ինչպես նաև ներքին հակահրդեհային ջրաքանակ ապահովելու համար նախատեսվում է պահուստային բաքի տեղադրում, որը միաժամանակ կարգավորող դեր կատարում է:

թ. Նյութերի և բնառեսուրսների օգտագործում

Գավառի գյուղատնտեսական քոլեջի վերակառուցման ժամանակ օգտագործվելու են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քար, փայտ, մետաղ, ապակի, բարձրորակ սվաղ, երեսապատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութեր, բետոնյա կոնստուկցիաներ, մետաղական կոնստուկցիաներ և այլն:

Բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ շինհրապարակների տարածքների ջրցանի, հողի/գրունտի խոնավացման, ինչպես նաև շինարարական անձնակազմի խմելու և կենցաղային կարիքների համար:

Շինարարական աշխատանքների ժամանակ ջուրը օգտագործվելու է աշխատողների խմելու և կենցաղային նպատակների, ինչպես նաև փոշենստեցման համար:

Աշխատողների խմելու և կենցաղային նպատակներով ջրածախսը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$W = (n \times N + n_1 \times N_1) \times T$$

Որտեղ՝ n - տեխնիկական աշխատողների և ծառայողների թիվն է

N - ջրածախսի նորման՝ 0.016մ^3 ,

N_1 - բանվորների թիվն է,

N_1 - ջրածախսի նորման բանվորների համար՝ $0.025 \text{մ}^3/\text{մարդ օր}$

T - աշխատանքային օրերի առավելագույն թիվը ամբողջ շինարարության ժամանակ՝ 650 օր:

Ըստ նախնական հաշվարկների բանվորների և ԻՏԱ թիվը տատանվելու է 5-ից մինչև 55 մարդ, միջին՝ 32 բանվոր և 9 ԻՏԱ:

Այսպիսով՝ $W = (9 \times 0.016 + 32 \times 0.025) \times 650 = 613.6 \text{մ}^3/\text{շին.ժամ}$, միջին օրեկան 0.944մ^3 :

Արտադրական նպատակներով ջրի ծախսը պայմանավորված փոշեառաջացման օջախների ջրմամբ:

Այդ ծախսը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$V_1 = S \times K \times T \times K_1,$$

Որտեղ՝ S - թրջվող մակերեսն է, 400մ^2 ,

K - ջրցաման նորման – $0.0015 \text{մ}^3/1 \text{մ}^2$

T – ջրցանի /տաք և չոր եղանակի/ օրերը ամբողջ շինարարության ընթացքում՝ 288 օր

K_1 – ջրցանի օրական քանակը, 2

Այսպիսով՝ $V_1 = 400 \times 0.0015 \times 288 \times 2 = 345.6 \text{մ}^3/\text{շին.ժամ}$:

3. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԻ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ԻՐԱԴՐՈՒԹՅԱՆ ՍԽԵՄԱՆ

3.1. Տարածքի աշխարհագրական դիրքը և բնակլիմայական պայմանները

Գավառը՝ իր մեծակա տարածքով գտնվում է Սեանի ավազանի արեւմտյան մասում, Գեղամա լեռնաշղթայի արեւելյան լանջերին:

Գեղարքունիքի մարզի տարածքն իրենից ներկայացնում է բարձր ծալքաբեկորավոր և միջին բարձրության լեռներով շրջապատված գոգավորություն, որի միջլեռնային իջվածքի հատակը զբաղեցնում է Սևանա լիճը:

Գավառագետի ավազանի տարածքի մոտ 80% -ը գտնվում է մինչեւ 2000մ բարձրության վրա, ամենաբարձր լեռնագագաթը Աժդահակն է՝ 3598մ բարձրությամբ: Ռելիեֆը ալիքավոր է և ունի ընդհանուր թեքություն դեպի արևլք՝ Սևանի ուղղությամբ:

Տարածաշրջանի հիմնական *Վարդենիսի լեռնաշղթան* սահմանազատում է Հայաստանի Գեղարքունիքի, վայոց ձորի մարզերը և Արցախի հանրապետությունը: Ձգվում է Գեղամա լեռների Գնդասար գագաթից մինչև Մեծ Ծարասարի լեռնահանգույցը: Երկարությունը 60 կմ է, առավելագույն բարձրությունը Վարդենիս լեռն է /3552 մ/: Լեռնագագաթներից են *Սանդուխտասարը* /3454 մ/ և *Փորակ* լեռը /3047 մ/, որը երիտասարդ հրաբուխ է:

Կլիմայական պայմանները

Սևանա լճի ջրհավաք ավազանում կլիմայի ձևավորման հիմնական գործոններն՝ են արևի ճառագայթումը և մթնոլորտային շրջապտույտը: Արևային ժամերի քանակը տարեկան տատանվում է 2600-2800-ի միջև: Սևանա լճի ավազանի տարբեր հատվածներ աչքի են ընկնում տարբեր կլիմայական պայմաններով: Ամենաանպաստ կլիմայական պայմանները դիտվում են լճի արևմտյան ափին՝ Գավառի տարածաշրջանում, որտեղ օդի ջերմաստիճանը կարող է իջնել մինչև -36 C:

3.2. Մակերևույթային և ստորգետնյա ջրային ռեսուրսներ

Տարածաշրջանի հիմնական ջրագրական միավորը Գավառագետն է և Սևանա լիճը:

Գավառագետք. Սկիզբ է առնում Գեղամա լեռնավահանի հյուսիսային լանջից, 3050 մ բարձրությունից և թափվում Սևանա լիճը: Երկարությունը 50 կմ է, ջրահավաք ավազանը՝ 480 կմ²: Ձմռանը սառցակալում է: Սնումը հիմնականում ստորերկրյա (83%) է, վարարումը՝ ապրիլ-հունիսին: Տարեկան միջին ծախսը 3,82 մ³/վ, առավելագույնը՝ 72,6 մ³/վ (1928-ի ապրիլի 7, Նորատուս գյուղ), հոսքը՝ 120,6 միլիոն մ³: Ջրերն օգտագործում են ոռոգման նպատակով

Սևանա լիճ. Սևանա լիճը գտնվում է ծովի մակարդակից մոտ 1900 մետր բարձրության վրա: Այն աշխարհի քաղցրահամ ջուր ունեցող 2-րդ բարձրադիր լիճն է: Հնում հայտնի է եղել Գեղամա ծով, Գեղարքունյաց ծով անուններով:

Երկարությունը 70 կմ է, առավելագույն լայնությունը՝ 55 կմ: Հայելու մակերեսը կազմում է 1260 կմ², որով ամենախոշորն է Հարավային Կովկասի տարածքում: Միջին խորությունը 26.8 մ է, ամենախորը վայրը՝ 83 մ (Փոքր Սևան): Ջրի ծավալը 32,92 մլրդ մ³ է: Սևանա լիճը Շորժայի ստորջրյա թմբով բաժանվում է 2 մասի՝ Մեծ Սևանի (37.7 մ միջին խորություն) և Փոքր Սևանի (50.9մ):

Սևանա լիճը բաց լիճ է և ունի քաղցրահամ ջուր: Լիճ են թափվում 28 մեծ ու փոքր գետակներ, սակայն սկիզբ է առնում միայն մեկը՝ Հրազդանը: Վերջինիս շնորհիվ ջրերի տարեկան արտահոսքը կազմում է 0.7 կմ³:

Լճի ծագումնաբանական վարկածներից մեկի համաձայն՝ այն առաջացել է չորրորդական ժամանակաշրջանում: Այն գոյացել է հրաբխային գործունեության հետևանքով՝ միջլեռնային տեկտոնական իջվածքում սառցադաշտային և ձնհալոցքային ջրեր լցվելու արդյունքում: Չորս կողմում առանձնակի շրջապատում են Արեգունու, Սևանի, Վարդենիսի և Գեղամա լեռները:

Խորհրդային կառավարման տարիներին լճի մակարդակը զգալիորեն իջել է /18 մ/, ինչի հետևանքով տարածաշրջանում առաջացել է էկոլոգիական խնդիր: 1978 թվականին ստեղծվում է Սևան ազգային պարկը: Ջրի մակարդակի բարձրությունը վերականգնելու համար կառուցվել է Արփա – Սևան (48.3 կմ, 1963-81 թվականներ), ապա՝ Որոտան – Արփա դերիվատացիոն ջրատարները (21.6 կմ, 2004 թվական):

Հիդրոէներգաբանական տեսակետից տարածքը բնութագրվում է ուժեղ և թույլ ջրատար ապարների առկայությամբ: Ուժեղ ջրատար են լճային նստվածքները, իսկ անդեգիտային պորֆիրիտները և տուֆաբերեկրիաները համարվում են թույլ ջրատարներ: Սևանա լճի ջրհավաք ավազանը հարուստ է խորքային ջրերով՝ աղբյուրներով և արտեզյան ավազաններով, որոնք տեղաբաշխված են անհավասարաչափ: Այդ աղբյուրները

օգտագործվում են ոռոգման և ջրամատակարարման նպատակով: Այդպիսի աղբյուրներով հատկապես հարուստ է արևմտյան ափը: Հանքային աղբյուրները լրացնում են Սևանա լճի ավազանի ռեկրեացիոն ռեսուրսների հարուստ համակառուցները: Գետահովիտներում տարածված են ճնշումային արտեզյան ջրեր, որի հետևանքով այդ տարածքներում գրունտային ջրերի մակարդակները ավելի բարձր են: Բնակավայրերի մեծ մասը տեղադրված են գետահովիտներում, որտեղ գեոդինամիկ պրոցեսներից տարածված են տարբեր մասշտաբի և ծագման սահքեր, հեղեղներ և քարահոսքեր (Գավառագետ, Ձկնագետ և այլն): Տարածաշրջանն ունի գրունտների առավելագույն՝ 0.3-0.4գ արագացում և գտնվում է 9 բալ երկրաշարժերի հնարավոր ուժգնության շրջանում:

3.3. Հողեր

Գավառի տարածաշրջանը հիմնականում զբաղեցնում են մարգագետնասևահողերը, որը բնորոշ է բարձր դիրք ունեցող խոնավ դաշտավայրերին ու սարահարթներին: Կան ոչ մեծ քանակությամբ ճահճացած հողեր, որոնք, այնուամենայնիվ ամռան ընթացքում ամբողջովին չորանում են ու պնդանում:

Մարգագետնային սևահողերը որպես ոչ գոտիական հողատիպ՝ ձևավորվել են բարձրլեռնային հարթավայրերում և առանձին, ոչ մեծ տարածքներով հանդիպում են Աշոցքում, Լոռիում, Շիրակում, Ապարանում և Սևանի ավազանում: Այդ հողերիի զարգացումն ընթանում է 11,5-3 մ խորության ստորերկրյա քաղցրահամ ջրերի մշտական ազդեցությամբ: Մարգագետնասևահողային հողերին բնորոշ են կրազերծվածությունը, կնձիկահատիկային կառուցվածքը, հումուսի պարունակությունը բարձր է՝ մինչև 15 %, ունեն թույլ թթվային ռեակցիա, կատիոնային փոխանակության մեծ կլանունակություն (մինչև 57 մգ/էկվ), մեխանիկական կազմը՝ ծանր կավավազային և կավային է: Օգտագործվում են որպես վարելահողեր և խոտհարքներ:

Հողի բերրի շերտի հզորությունը բավական մեծ է՝ երբեմն գերազանցում է 80 սմ:

3.4. Բուսական աշխարհ

Տարածքը պատկանում է Սևանի ֆլորիստիկ շրջանին:

Տարածաշրջանում լճային նստվածքների վրա ձևավորվել են գետահովտային, մարգագետնացած կոպճային և թույլ զարգացած ավազակոպճային հողագրունտների տիպերը: Ավազանի բնական ցամաքային էկոհամակարգերն են մարգագետինները, տափաստանները, անտառային և նոսրանտառային համակեցությունները, ինչպես նաև ժայռա-քարացրոնային և լճի ջրերից ազատված համալիրներ: Մարզի բնական մնացորդային անտառները տեղակայված են առանձին, ոչ մեծ կղզյակներով ուղղաձիգ լանջերի վրա: Առանձին ծառեր և ծառերի փոքր խմբեր հանդիպում են նաև լճափի այլ

հատվածներում, ինչը վկայում է անցյալում այդ հատվածների բնական անտառապատվածության մասին: Այդ խմբավորումներն աստիճանաբար փոխարինվում են լեռնա-քսերոֆիլ թփուտների: Բնական մնացորդային անտառների ընդհանուր անտառապատ մակերեսը կազմում է մոտ 5-7 քառ. կմ: Բնական անտառները կազմավորված են եղել հիմնականում գիհի և կաղնի ծառատեսակներից, որոնք պահպանվել են մինչ օրս: Այստեղ կարելի է հանդիպել կաղնու (արևելյան) և ծառերի ու թփերի այլ արժեքավոր տեսակների, որոնց մի մասն աճում է ավամերձ գոտում: Ռելիեֆային առանձնահատկությունների շնորհիվ Սևանի ավազանի բուսականությունն ունի վառ արտահայտված մոզաիկ բնույթ: Ցածրադիր վայրերում աչքի են ընկնում անապատները ու կիսաանապատները, որոնք առաջացել են լճից ազատված ավազուտների վրա և ունեն երկրորդային ծագում: Այդ տեսակներից որպես ռելիկտային համակեցություններ պահպանվել են՝ տորֆային ճահճուտները, քարացրոնային և ժայռային բուսական խմբավորումները, փովող թփուտները՝ ցածրաճ գիհուտներ (Juniperus depressa) և այլն: Ծառաթփային բուսականության հիմնական կանաչ գոտին ունի արհեստական ծագում: Հիմնականում դրանք լճի ջրերի իջեցման արդյունքում առաջացած գրունտների վրա տնկարքներն են, կատարված քսաներորդ դարի 50-80-ական թվականներին: Հիմնական անտառ կազմող ծառատեսակները հանդիսանում են սոճին, եղևնին, բարդին, ուռենին, թեղին, հացենին, ակացիան, փշատենին և այլ փշատերև ու սաղարթավոր ծառատեսակներ: Սևանա լճի ջրից ազատված հողագրունտները ծածկված են արհեստական տնկարկներով (սոճի, չիչխան, բարդի և այլ): Թփատեսակներից ամենամեծ մակերեսները զբաղեցնում է չիչխանը: Թփուտներից տարածված են՝ արոսենու (արոսենի Կուզնեցովի (Sqrbus kuznetsqvii), արոսենի Հայաստանի (S.hajastana), արոսենի հունական (S.graeca)), մասրենու (Rqsa spinqsissima, R.canina), ասպիրակի (Spiraea crenata), ալոճենու (Crataegus orientalis), ուռենու (Salix caprea) և այլ համակեցություններ: Լճի մակարդակի իջեցման հետևանքով առաջացած տարածքներում աճեցվել են նաև արհեստական անտառաշերտեր: Այստեղ զգալի տարածքներ են զբաղեցնում փշարմավի պուրակները: Ավազանի տարբեր մասերում հայտնաբերված բրածո բույսերը և կենդանիները վկայում են այն մասին, որ ոչ վաղ երկրաբանական անցյալում Սևանի ավազանը ծածկված է եղել խիտ անտառներով, որոնք անհայտացել են կլիմայի փոփոխության ցամաքայնության ուժեղացման հետևանքով: Բուսածածկում հանդիպում են նաև ճահիճներ, ծառատնկեր և մացառուտներ: Առափնյա ճահճացող մասերում և ջրափոսերում լողում են ջրոսպի կլորավուն, կամ երկարավուն թիթեղանման և գորտնուկի կանաչ տերևներով և դեղին ծաղիկներով բուսակները:

Քուլեջի տարածքը գտնվում է Գավառ քաղաքի կառուցապատված շրջանում: Անմիջապես քուլեջի տարածքում չկան վայրի բուսատեսակներ: Քուլեջի շինարարության

ընթացքում բուսածածկը ամբողջությամբ վնասվել էր, հետագայում այն ինքնաբերաբար ծածկվել էր խոտով:

3.5. Կենդանական աշխարհ

Տեղանքին բնորոշ կենդանատեսակների աղյուսակը

Դաս	Կարգ	Ընտանիք	Ցեղ	Տեսակ	Հայերեն Անվանում
Amphibia	Anura	Ranidae	Rana	ridibunda	Լճագորտ
Amphibia	Anura	Ranidae	Rana	macrocnemis	Փոքրասիական Գորտ
Reptilia	Squamata	Lacertidae	Darevskia	raddei	Ռադդեի ժայռային մողես
Reptilia	Squamata	Lacertidae	Darevskia	unisexualis	Միասեռ ժայռային մողես
Reptilia	Squamata	Lacertidae	Lacerta	agilis	Ճարպիկ մողես
Reptilia	Squamata	Lacertidae	Lacerta	media	Միջին մողես
Reptilia	Squamata	Lacertidae	Lacerta	strigata	Զոլավոր մողես
Aves	Galliformes	Phasianidae	Coturnix	coturnix	Սովորական լոր
Aves	Passeriformes	Corvidae	Pica	pica	Սովորական կաշաղակ
Aves	Passeriformes	Turdidae	Turdus	torquatus	Սպիտակախածի կեռնեխ
Aves	Cuculiformes	Cuculidae	Cuculus	conorus	Սովորական կկու
Aves	Passeriformes	Corvidae	Corvus	monedula	Սովորական ճայ
Aves	Passeriformes	Passeridae	Passer	domesticus	Տնային ճնճուկ
Aves	Accipitriformes	Accipitridae	Buteo	buteo	Մեծ ճուռակ
Aves	Apodiformes	Apodidae	Apus	apus	Սև մանգաղաթև
Mammalia	Rodentia	Cricetidae	Microtus	arvalis	Սովորական դաշտամուկ

3.6. Վտանգված էկոհամակարգեր, բնության հատուկ պահպանվող տարածքներ

“Սևան ազգային պարկ”

Գավառ քաղաքը գտնվում է Սևան ազգային պարկի պահպանման գոտում:

Սևան ազգային պարկը զբաղեցնում է Սևանա լճի ամբողջ հայելին և ափամերձ տարածքները: Պարկի ընդհանուր տարածքը՝ Սևանա լճի հայելու հետ միասին կազմում է

147.343 հա, իսկ առանց լճի հայելու՝ 22.585 հա: Պահպանական գոտու տարածքը կազմում է 342.920 հա:

Պարկը գտնվում է ՀՀ Բնապահպանության նախարարության իրավասության ներքո: Ստեղծվել է 1978 թ մարտի 14-ին, ՀԿԿ Կենտկոմի և Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդի թիվ 125 որոշմամբ:

Պարկի տարածքի բնական էկոհամակարգերի, լանդշաֆտային ու կենսաբանական բազմազանության, բնության ժառանգության գիտական ուսումնասիրության, պահպանության, պաշտպանության, վերականգնման, վերարտադրության, հաշվառման, գույքագրման, դիտանցի, ինչպես նաև պարկի բնական պաշարների կայուն օգտագործման ապահովումը իրականացնում է «Սևան ազգային պարկ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը: Այն շահույթ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող բնապահպանական, գիտահետազոտական, գիտաճանաչողական կազմակերպություն է, որը գործում է ՀՀ Սահմանադրության, «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» և «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքների, ՊՈԱԿ-ի կանոնադրության և այլ իրավական ակտերի հիման վրա: «Սևանա լճի մասին» ՀՀ օրենքով (15-ը մայիսի 2001 թ.) ազգային պարկի տարածքը ամբողջությամբ մտել է Սևանի էկոհամակարգի Կենտրոնական գոտու մեջ, սահմանվելով որպես քաղաքաշինական գործունեության հատուկ կարգավորման օբյեկտ:

Պարկի տարածքը, համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 18-ի N 205-Ն որոշմամբ հաստատված «Սևան» ազգային պարկի 2007-2011 թվականների կառավարման պլանի, բաժանվում է հետևյալ տարածքագործառնական գոտիների՝

- 1) արգելոցային՝ ընդգրկում է «Արտանիշի», «Նորաշենի», «Լիճք-Արգիշի» և «Գիլի» արգելոցները.
- 2) արգելավայրային՝ ընդգրկում է «Գավառագետի» և «Գիհի-կաղնուտային ռելիկտային» արգելավայրերը.
- 3) ռեկրեացիոն.
- 4) տնտեսական:

3.7 Սոցիալ տնտեսական պայմանները

Տվյալ գործունեության ազդակիր Գավառ քաղաքը Գեղարքունիքի մարզի վարչական, կրթական եւ մշակութային կենտրոնն է: Ներկայիս Գավառ /տարբեր ժամանակներում՝ Նոր Բայազետ, Կամո/ քաղաքի եւ նրա շրջակա գյուղերի բնակիչների մեծ մասը վերաբնակեցվել են հին Բայազետից, որը պատմական Հայաստանի հիշարժան բնակավայրերից մեկն էր՝ իր

բերդով, եկեղեցիներով, սրբավայրերով, հերոսական անցյալով: Գավառ քաղաքն, ինչպես նաև իր տարածաշրջանը, ըստ Անանիա Շիրակացու «Աշխարհացույցի», մտել է Մեծ Հայքի Սյունիքի նահանգի մեջ: Գավառ քաղաքի բնակատեղին գոյություն է ունեցել մ.թ.ա. 8-րդ դարում: Քաղաքը հիմնադրվել է Ուրարտական թագավոր Ռուսա 1-ի կողմից /մ.թ.ա. 735-713թթ./, որի ապացույցն է Գավառի «Դարի գլուխ» կոչված դամբարանադաշտում հայտնաբերված մ.թ.ա. 732թ. սեպագիր արձանագրությունը: Հնագիտական պեղումներից պարզվեց, որ այս տարածքը մ.թ.ա. 2-1 հազարամյակից եղել է բնակեցված: Քաղաքը բնակեցված է եղել նաև Արշակունիների թագավորության ժամանակահատվածում /66-428թթ./: Գաղթական բայազետցիները Գավառ պատմական ավանի տեղում 1830թ. Հիմնեցին Նոր Բայազետ բնակավայրը: Գավառը 1830թ. դառնում է Հայաստանի կարևոր տնտեսական կենտրոններից մեկը, իսկ 1960 – 1991թթ. քաղաքում կառուցվեցին բազմաթիվ արդյունաբերական ձեռնարկություններ, փողոցները ասֆալտապատվեցին եւ լուսավորվեցին, կառուցվեցին բազմաթիվ բազմաբնակարան շենքեր, բարելավվեց ժողովրդի կենսամակարդակը:

Քաղաքի միջին բարձրությունը ծովի մակարդակից՝ 2001 մ
Հեռավորությունը Երևանից՝ 95 կմ:
Գավառ համայնքի կազմի մեջ են՝ Կարմիրգյուղ, Հայրավանք, Նորատուս և Գանձակ բնակավայրերը:
Համայնքի բնակչությունը կազմում է 29146 մարդ
Համայնքի տարածքը՝ 25228 հա, այդ թվում գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 22660 հա:

4. ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ
ՎՆԱՍԱԿԱՐ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԲԱՑԱՌՄԱՆԸ, ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ
ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

4.1 Ռիսկերի գնահատում

Գավառի գյուղատնտեսական քոլեջի շենքային պայմանների բարելավման ընթացքում շրջակա միջավայրի վրա կդրսևորվեն որոշակի բացասական ազդեցություններ, ակայն վերջիններս կկրեն ժամանակավոր բնույթ: Ազդեցությունները իրենց բնույթով կլինեն սահմանափակ և կարճատև և պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքներով:
Շինարարության փուլում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները և ռիսկերը հիմնականում պայմանավորված են արտանետումներով, որոնք կարող են առաջանալ՝

- Կառուցվող շենքերի շինարարության ընթացքում
- Հիմքերի փորման ընթացքում
- Դիզելային վառելիքի արտանետումներ շինարարական տեխնիկայի շահագործման ժամանակ:
- Հողային զանգվածների և շինադրի տեղափոխման հետ կապված,
- Շինարարական տեխնիկայի շահագործմամբ,
- շինհրապարակների տեղադրման և վառելիքաքսայուղերի պահեստավորման հետ կապված,
- Շինարարության ընթացքում մեքենաների և տեխնիկայի տեղաշարժից մերձակա բնակչությանը պատճառվող անհանգստությամբ
- Շինարարական տեխնիկայի շահագործման ընթացքում աղմուկի մակարդակի ավելացմամբ:

Թվարկված աշխատանքների ազդեցությունը նվազեցնելու և փոխհատուցելու նպատակով նախատեսված են բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են բնապահպանական կառավարման պլանում:

4.2 Բնապահպանական միջոցառումներ

Շրջակա տարածքների և գործունեության ազդեցության ենթակա մոտակա բնակչության վրա բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված են շինարարական աշխատանքների իրականացմամբ, կրում են ժամանակավոր բնույթ և ունեն կարճատև ազդեցություններ: Այդ ազդեցությունները կարող են կանխվել կամ նվազեցվել բնապահպանական կառավարման պլանով (ԲԿՊ) նախատեսված՝ սոցիալական ազդեցությունները մեղմացնող միջոցառումների և բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացման արդյունքում, որին պարտավոր են հետևել՝ շինարարը, հսկող և վերահսկող մարմինները:

Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում շրջակա տարածքների և սոցիալական միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությանների կանխման, կամ մեղմացման միջոցառումները ըստ ազդեցության ուղղությունների ներկայացվում են ստորև:

4.2.1. Մթնոլորտային օդ

- Օդային ավազանը աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝
- Շինարարական աշխատանքների /փոշեառաջացման աշխատանքներ/ ընթացքում իրականացնել ջրցան,

- Սորուն նյութերի ժամանակավոր կուտակումները և շինհրապարակը ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով՝ կանխարգելելու համար փոշու տարածումը,
 - Պարբերաբար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերում:
 - Գրունտի և սորուն նյութերի տեղափոխումնիրականացնել ծածկված թափքերով բեռնատարներով:
 - Խուսափել անորակ վառելիքի օգտագործումից:
- Ջերմասպառումը կրճատելու և համապատասխանաբար ջերմային էներգիայի արտադրության ժամանակ առաջացող արտանետումները նվազեցնելու նպատակով նախատեսված է տանիքների վրա տեղադրել արևային ջրատաքացուցիչներ

4.2.2. Ջրային ռեսուրսներ

Ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման նպատակով նախատեսվել են հետևյալ միջոցառումները.

- Բետոնի խառնուրդը գնել համապատասխան մատակարարներից,
- Ջրցանի ծավալները հաշվարկել այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- Տարածքի հոսքաջրերը միավորել մեկ բակային ցանցում և միացնել գոյություն ունեցող հեղեղատար ցանցին:

4.2.3. Հողային ռեսուրսներ

Հողային ռեսուրսների պահպանության նպատակով անհրաժեշտ է՝

- Շինարարական նյութերի և քսայուղերի ժամանակավոր պահեստները տեղադրել բետոնապատ մակերեսի վրա, որտեղ ապահովված կլինի հոսակորուստների հավաքման համակարգով,
- Աշխատանքների ավարտից հետո տարածքը բարեկարգել, վերականգնել և մաքրել՝ առաջացած թափոնները տեղափոխելով Գավառի քաղաքապետարանի կողմից հատկացված աղբավայր,

Շինարարական աշխատանքների ընթացքում առաջանում են կենցաղային և շինարարական աղբ:

Կենցաղային աղբ՝ 30 – 32 մ³ ծավալով:

Շինարարական աղբ՝ 50 – 55 մ³ ծավալով, որը համաձայն ՀՀ բնապահպանության /ներկայում՝ շրջակա միջավայրի/ նախարարի 25,12,2006թ. N 430-Ն հրամանի

համապատասխանում է «Պատի բետոնե իրեր, սյուներ, փչացած և աղտոտված բետոնային սալիկներ» տեսակին, դասիչ՝ 39901200 01 00 4, վտանգավորության դաս՝ IV:

Շինարարական և կենցաղային աղբով շրջակա տարածքների աղտոտումը բացառելու նպատակով նախատեսվում է՝

- Շինիրապարակում բացառել թափոնների ժամանակավոր կուտակումները,
- Թափոնները ժամանակին տեղափոխել հատկացված վայրեր՝ համայնքի ղեկավարի կամ աղբավայրը շահագործողների հետ նախապես կնքված պայմանագրերի համաձայն,
- Շինանյութերի ձեռք բերում միայն լիցենզավորված մատակարարներից:

4.2.4. Աղմուկ

- Աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է՝
- Շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- Պարբերաբար ստուգել և կարգաբերել տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչները,
- Շինարարական տեխնիկական միջոցների ընտրության ժամանակ հատուկ ուշադրություն դարձնել դրանց աղմուկի մակարդակին:
- Խուսափել աղմկահարույց մեքենաների և սարքավորումների օգտագործումից, անհրաժեշտության դեպքում խլացուցիչների տեղադրում:
- Որպես փոխհատուցման միջոցառում տարածքում ստեղծել կանաչապատ գոտիներ:

4.2.5. Կենսաբազմազանություն

Կենսաբազմազանության վրա հնարավոր ազդեցություններ չեն դիտարկվում, քանի որ բացակայում է բնական լանդշաֆտը, տարածքն ամբողջովին խախտված է շինարարական աշխատանքներից: Կենդանիների հանդիպելը տարածքում անհավանական է, պայմանավորված ճանապարհների և տրանսպորտային շարժի առկայությամբ:

Աշխատանքների ավարտից հետո տարածքը կբարեկարգվի և կհանձնվի քոլեջի տնօրինությանը, որը կիրականացնի կանաչապատում և ծառատունկ: Տարածքում առկա է ոռոգման համակարգ, որը աշխատանքների ընթացքում կվերանորոգվի:

Ճանապարհների խաթարման և ծանրաբեռնվածության հետևանքով քնակչությանը պատճառված անհանգստությունը մեղմելու նպատակով նախատեսվում է՝

- Շինարարական հրապարակում բեռնատար մեքենաների ժամանակավոր կայանման համար տարածքների տրամադրում,
- շինարարական մեքենա-սարքավորումների տեղաշարժի կազմակերպում շարասյուներով և սահմանափակ արագությամբ (≤ 30 կմ/ժ), ինչպես նաև մեքենաների իրար հաջորդող տեղաշարժի կազմակերպում՝ առնվազն 30 րոպե պարբերականությամբ,
- Ցուցանակների տեղադրում, ինչպես նաև ժամանակավոր անցումների նախատեսում՝ որպես այլընտրանքային ճանապարհներ:

Շինարարության փուլում հնարավոր սոցիալական ազդեցություններից խուսափելու նպատակով նախատեսվում է՝

- Թույլ չտալ շինարարական աշխատանքների կատարումը սահմանված ժամերից դուրս.
- Շինհրապարակը ցանկապատել և վերահսկել՝ կանխելու համար չլիազորված անձանց մուտքը շինհրապարակ,
- Վտանգավոր տեղամասերում տեղադրել նախազգուշացնող նշաններ,
- Որակավորված աշխատակիցների միջոցով իրականացնել սարքավորումների պարբերական զննումներ
- Շինարարների համար՝ անվտանգության աուդիտների, առաջին օգնության և անվտանգության դասընթացների պարբերաբար կազմակերպելում և իրականացում:

4.2.6. Աշխատանքի անվտանգություն և առողջություն

Առողջության և աշխատանքային անվտանգության միջոցառումները շինարարության փուլում կիրականացվեն կապալառուի կողմից՝ համաձայն ԲԿՊ-ում նկարագրված միջոցառումների:

4.3 Փոխհատուցում

Ինչպես նախորդ ենթակետերում նշվել է, բնապահպանական միջոցառումների նպատակն է նվազեցնել գործունեության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա և վերականգնել բոլոր այն տեղամասերի նախնական վիճակը, որոնք կենթարկվեն գործունեության ազդեցության:

Նախազծով նախատեսված շինարարական աշխատանքների ավարտից հետո տարածքը բարեկարգել:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո որպես կարևոր միջոցառումներ նախատեսվում է՝

- Բոլոր մակերեսներն այդ թվում՝ ժամանակավոր օգտագործված տարածքները վերականգնել մինչև սկզբնական վիճակը
- Ամբողջ շին աղբը, նյութերի մնացորդները և սարքավորումները հեռացնել շինհրապարակից,
- Այն տեղամասերում, որոնք ենթակա են գործունեության ազդեցության, նախատեսվում է իրականացնել նախնական ուսումնասիրություն և ետնախազձային մոնիթորինգ:

Բոլոր բնապահպանական միջոցառումները ներառված են շինարարության նախահաշվի մեջ և կիրականացվեն շինարարական կազմակերպության կողմից:

5. ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ և ՄՈՆԻԹՈՐԻՆԳԻ ՊԼԱՆ

Ռիսկերի նվազեցումը կարելի է ապահովել իրականացնելով մի շարք բնապահպանական միջոցառումներ, որոնք ամփոփվել են բնապահպանական կառավարման պլանում և կազմակերպել իրականացվող աշխատանքների մոնիթորինգ:

ԲԿՊ-ն իրենից ներկայացնում է շրջակա միջավայրի, մարդու առողջության ու շինարարների անվտանգության վրա հնարավոր բացասական ազդեցությունների նկարագրությունը, որոնք հնարավոր են ծրագրի իրականացման նախագծման, շինարարության և շահագործման փուլերում և դրանք կանխող, մեղմացնող միջոցառումների ցանկը:

ԲԿՊ պարունակում է նախատեսվող գործունեության բոլոր փուլերի ընթացքում (նախագծում, շինարարություն, շահագործում) կանխատեսված հնարավոր անցանկալի բացասական ազդեցությունները կանխելու և մեղմացնելու միջոցառումները, ինչպես նաև մոնիտորինգի գործողություններ՝ ստուգելու համար շինարարական աշխատանքների իրականացման ընթացքի համապատասխանությունը պլանավորված մեղմացնող միջոցառումներին:

Հիմնական կապալառուն պատասխանատու է լինելու ԲԿՊ-ում ներառված միջոցառումների իրականացման համար և իր հերթին համապատասխան պայմանագրային պարտավորություններ է նախատեսելու ենթակապալառուի հետ իր պայմանագրերում:

ԲԿՊ-ում նախանշված մեղմացնող միջոցառումների կատարումը և դրանց արդյունավետությունը ստուգելու նպատակով շինարարության կապալառուի կողմից կիրականացվի կանոնավոր մոնիթորինգ, որի շրջանակներում նախագծային կազմակերպության բնապահպանության մասնագետի կողմից՝ յուրաքանչյուր փուլի մասով, կիրականացվեն մոնիթորինգի ստուգայցեր՝ երկու շաբաթը մեկ անգամ (երկու անգամ մեկ ամսվա ընթացքում): Արդյունքները գրանցվելու են մոնիթորինգի ստուգաթերթիկում:

ԲԿՊ-ն, որը ներկայացված է հավելված 1-ում, ընդգրկվելու է ծավալաթերթերում և որպես անբաժանելի բաղադրամաս կցվելու է պայմանագրային փաստաթղթերին:

ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆ

Ծրագրի Գործողությունները	Հնարավոր Ազդեցությունները	Առաջարկվող մեղմացնող Միջոցառումները	Մեղմացնող միջոցառման պատասխանատուն	Մոնիթորինգի պատասխանատուն
<p>Նախագծային փաստաթղթերի պատրաստում</p> <p>Շինարարական Հրապարակի Բոլոր գործողությո-</p> <p>Աշխատողների, ինչպես նաև շինհրապարակի մերձակայքում բնակվող մարդկանց անվտանգություն</p>	<p>Բացասական ազդեցություններ՝ շինարարության փուլում, որոնք անհրաժեշտ է հաշվի առնել աշխատանքային նախագծում,</p> <p>ԲԿՊ-ի բնապահպանական Պահանջների մասին տեղեկատվության պակասը կարող է հանգեցնել շրջակա միջավայրի վատթարացման:</p>	<p>Աշխատանքային նախագիծը անհրաժեշտ է մշակել հաշվի առնելով ԲԿՊ-ում պլանավորված մեղմացնող միջոցառումները, որոնք պետք է ներառված լինեն նաև պայմանագրային փաստաթղթերում:</p> <ul style="list-style-type: none"> - Շինարարության համար անհրաժեշտ բոլոր պահանջվող թույլտվությունների ձեռք բերում - Անհրաժեշտ է նշանակել բնապահպանական/ Աշխատանքային անվտանգության և արտակարգ իրավիճակների համար պատասխանատու անձ, ով մշտապես ներկա կգտնվի շինհրապարակում: - Շինարարության և շրջակա միջավայրի անվտանգությունը վերահսկող մարմինները, համայնքը և բնակիչները պետք է նախազգուշացված լինեն սպասվող գործընթացների վերաբերյալ - Աշխատանքները կիրականացվեն ապահով և կարգապահ՝ նվազագույնի հասցնելով ազդեցությունը հարևան բնակիչների և շրջակա տարածքների վրա: - Աշխատողների անհատական պաշտպանության միջոցները պետք է համապատասխանեն ՀՀ օրենսդրությամբ սահմանված չափանիշներին (մշտապես սաղավարտների կիրառում, անհրաժեշտության դեպքում դիմակներ և պաշտպանիչ ակնոցներ, պաշտպանիչ հագուստ և կոշիկներ) - Շինհրապարակում տեղադրվող համապատասխան տեղեկատվական վահանակները աշխատողներին կիրազեկեն հիմնական կանոնների և նորմերի վերաբերյալ: 	<p>Զանգված ՍՊԸ</p> <p>Շինարարության կապալառու</p> <p>Շինարարության կապալառու</p>	<p>Քավառի քաղաքապետարան</p> <p>Քավառի քաղաքապետարան</p> <p>Քավառի քաղաքապետարան</p>


<p>Հողային աշխատանքներ, շինանյութերի փոխադրումներ Այլ շինարարական աշխատանքներ</p>	<p>Շին տեխնիկայի շահագործումից փոշու և վնասակար նյութերի արտանետումներ;</p>	<ul style="list-style-type: none"> - Օդի աղտոտման և փոշու կառավարում Օդի որակի չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքների դեպքում: - Անհրաժեշտ է իրականացնել շին հրապարակի պարբերական ջրցանում փոշու արտանետումները նվազագույնի հասցնելու նպատակով; - Անհրաժեշտ է նվազագույնի հասցնել շինհրապարակում պահվող նյութերի և թափոնների քանակը և հնարավորինս ծածկել կուտակված նյութերը փոշու տարածումից խուսափելու համար; - Անհրաժեշտ է սահմանափակել մեքենաների արագությունը փոշու քանակը նվազեցնելու նպատակով; - Շինարարական աշխատանքների ընթացքում հատուկ տարողություններ և աղբավայրեր կնախատեսվեն տարբեր տեսակի շինարարական աղբի հեռացման համար - Աշխատանքների ընթացքում կառաջանան շինարարական թափոններ և աղբ, որոնք անմիջապես կտեղափոխվեն համապատասխան թափոնավայրեր և չեն առաջացնի կուտակումներ - Շրջակա տարածքները (մայթերը, ճանապարհները) պետք է զերծ պահվեն շինարարական աղբից՝ փոշին նվազագույնի հասցնելու նպատակով - Շինարարական տրանսպորտային միջոցների պարապուրդ շինհրապարակում չի թույլատրվի 	<p>Շինարարության կապալառու</p>	<p>Տեխնիկական վերահսկող, Քավառի քաղաքապետարան</p>
<p>Թափոնների կառավարում</p>	<p>Շին աղբի տեղադրում անհամապատասխան վայրերում; Վառելիքի, յուղի կամ այլ թունավոր նյութերի արտահոսքի պատճառով</p>	<ul style="list-style-type: none"> - Թափոնների հավաքման վայրերը և հեռացման ուղիները պետք է նախապես որոշված լինեն շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար: - Շինարարության արդյունքում գոյացող թափոնները պետք տարանջատվեն ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում և ըստ առաջացման տեղափոխվեն հատուկ հատկացված աղբավայր: - Շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից - Թափոնների հեռացման վերաբերյալ գրառումներ պետք է կատարվեն որպես ապացույց, որ թափոնների 	<p>Շինարարության կապալառու</p>	<p>Տեխնիկական վերահսկող, Քավառի քաղաքապետարան</p>

	Հնարավոր է վտանգավոր նյութերի Թափանցում հողի մեջ:	կառավարումը կատարվում է պատշաճ կերպով, նախատեսվածին համաձայն - Հնարավորության դեպքում կապալառուն կարող է պիտանի թափոնները կրկնակի օգտագործել		
Աղմուկի և թրթռումների կառավարում	Շին աշխատանքների արդյունքում աղմուկի և թրթռումների մակարդակի աճ:	- Աշխատատեղերում աղմուկի և թրթռումների մակարդակը պետք է համապատասխանի ՀՀ օրենսդրական նորմերին և մակարդակների չափագրումներ կիրականացվեն ազդակակիր անձանց համապատասխան բողոքի դեպքում: - Անհրաժեշտ է խուսափել շինարարական գործողություններից, մեքենաների և սարքավորումների կայանելուց զգայուն ազդակակիրների հարևանությամբ, ինչպիսիք են մասնավոր բնակելի տները, փոքր բիզնեսի կետերը, այլ հասարակական շենքերը; - Աղմկահարույց աշխատանքները անհրաժեշտ է հնարավորինս իրականացնել օրվա ցերեկային ժամերին: - Բոլոր մեքենաները պետք է ապահովված լինեն համապատասխան խլացուցիչներով: - Անհրաժեշտ է բացառել անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը;	Շինարարության կապալառու	Քավառի քաղաքապետարան
Շինհրապարակի վերականգնում		- Շինհրապարակից անհրաժեշտ է հեռացնել շինարարության հետ ապված բոլոր պարագաները, այդ թվում՝ չօգտագործված նյութերը, թափոնները, մեքենաները, սարքավորումները, ցանկապատումը և այլն; - Անհրաժեշտ է վերականգնել բոլոր վնասված կամ տեղահանված կոմունիկացիաները; - Մաքրել շինհրապարակը կենցաղային և այլ աղբից և հեռացնել յուղի, վառելիքի արտահոսքի հետքերը; - Կատարել բարեկարգման աշխատանքները՝ համաձայն աշխատանքային նախագծի բարեկարգման մասի;	Շինարարության կապալառու	Քավառի քաղաքապետարան


Մեղմացնող միջոցառումների ինդիկատորի արժեքը գնահատվում է նախագծային աշխատանքների արժեքի մոտավորապես 1,2%

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- ՀՀ Օրենք «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին», 2014 թ. Հունիսի 21:
- ԱԶԲ 2015, Բնապահպանական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:
 - Շինարարական Կլիմայաբանություն 2011: ՀՀՇՆ II 7.01-2011 ՀՀ քաղաքաշինության նախարարի 2011թ. Սեպտեմբերի 26-ի N167-Ն հրաման:
 - Временное методическое пособие по расчету выбросов от неорганизованных источников в промышленности строительных материалов, МИНПРОМСТРОЙ СССР1984, Москва.
 - <Http://xn--80aajzhcnfck0a.xn--p1ai/publicdocuments/1310049.pdf>
- ՀՀ Կառավարության որոշում N 1325-Ն «Հանրային ծանուցման և քննարկումների իրականացման կարգը սահմանելու մասին», 19 նոյեմբերի 2014 թ.:
- [Www.arlis.am](http://www.arlis.am)
- [Www.atdf.am](http://www.atdf.am)
- ՀՀ կառավարության N 862-Ա որոշում: Անհատույց սեփականության իրավունքով գույք հանձնելու և քանդման (ապամոնտաժման) աշխատանքներ կազմակերպելու մասին: 25 օգոստոս 2016, URL: <https://www.e-gov.am/gov-decrees/item/27593/>:
- Ավտոմոբիլային տրանսպորտից մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի հաշվարկման մեթոդական ցուցումներ, Մոսկվա, Հիդրոմետհրատ – 1983:
- ՀԲ 2015: Բնապահպանական և սոցիալական գնահատման և ուսումնասիրության շրջանակ:
- ՀՀ կառավարության որոշում N160-Ն, 2 փետրվար, 2016թ: Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիանների-ՍԹԿ) նորմատիվները հաստատելու մասին:



ԳԼԽԱՎՈՐ ՀԱՏԱԿԱԳԻԾ Մ 1:1000



- 1. ՆԱԽԱՏԵՍՎՈՂ 3 ՀԱՐԿԱՆԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՔՈՒՆԶԻ ԸՇՆԵՔ - 1126մ²
- 2. ԲԱՅՕԴՅԱ ՄԱՐԶԱԿԱՇՏ - 825մ²
- 3. ԽՈՏԻ ԿՈՒՏԱԿՄԱՆ ՀՈՎՀԱՐ - 370մ²
- 4. ԳՅՈՒՂՏԵՆՆԻԿԱՅԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՏԱՐԱՇՔ - 185մ²
- 5. ԿԱԹՍԱՅԱՏՈՒՆ - 40մ²
- ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ - 17700մ²

